Մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարանի Վ. Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հասարակագիտություն (5 դասաժամ), տեխնոլոգիա (1 դասաժամ) և երաժշտություն (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցակացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:
Ուսուցչի թափուր տեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հ Հ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10) հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում)

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. ապրիլի 18-ից մինչև մայիսի 3-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10:00- 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. մայիսի 13-ին ՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Վ. Եղիազարյանի անվան հ. 1 հիմնական դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Գ. Նժդեհի 20/2:
Տեղեկությունների համար զանգահարել (0252) 2-44-49 հեռախոսահամարով: